ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով փոխադարձ հետաքրքրությունը զբոսաշրջության բնագավառում երկարաժամկետ և սերտ համագործակցության հաստատման հարցում,

ցանկություն հայտնելով զարգացնելու այդ բնագավառում հարաբերությունները երկու երկրների, ինչպես նաև նրանց զբոսաշրջային կազմակերպությունների միջև,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև զբոսաշրջիկների փոխանակման ընդլայնմանը՝ երկու երկրների ժողովուրդների կյանքին, պատմությանը և մշակույթին ծանոթանալու նպատակով:

Համագործակցությունը կիրականացվի Կողմերի պետությունների օրենսդրությանը և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 2

Կողմերը կաջակցեն զբոսաշրջության բնագավառի պետական կառավարման մարմինների և զբոսաշրջային կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային և ներքին զբոսաշրջության զարգացմանը մասնակցող այլ կազմակերպությունների միջև էլ ավելի սերտ համագործակցությանը:

Հոդված 3

Կողմերը կնպաստեն զբոսաշրջային տեղեկության, տպագիր նյութերի, տեսաֆիլմերի փոխանակմանը, կաջակցեն գովազդային միջոցառումների, գիտաժողովների, սեմինարների, ցուցահանդեսների և տոնավաճառների անցկացմանը: Այդ նպատակով Կողմերը կարող են մյուս Կողմի պետության տարածքում ստեղծել տեղեկատվական կենտրոններ կամ նշանակել զբոսաշրջության պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Հոդված 4

Կողմերը կնպաստեն զբոսաշրջության բնագավառի մասնագետների և այլ աշխատողների, ինչպես նաև զբոսաշրջության մասնագիտությունների գծով

ուսանողների ուսուցման, պատրաստման և փոխանակման բնագավառում համագործակցությանը: Զբոսաշրջության զարգացման տարբեր հետազոտությունների և ծրագրերի իրականացման հարցում Կողմերը կօժանդակեն հասարակական և մասնավոր հատվածի կազմակերպություններին:

Հոդված 5

Կողմերը զբոսաշրջության պետական կառավարման իրենց մարմինների միջոցով կիրականացնեն զբոսաշրջությանը վերաբերող իրենց օրենսդրության, ինչպես նաև միջազգային զբոսաշրջային կազմակերպություններում իրենց կողմից իրականացվող գործունեության մասին տեղեկության փոխանակում:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի ավելի արդյունավետ իրագործման նպատակով Կողմերը տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի շրջանակներում կձևավորեն աշխատանքային խումբ, որի կազմի մեջ կընդգրկվեն երկու երկրների զբոսաշրջության ոլորտի մասնագետներ՝ զբոսաշրջության ոլորտում երկկողմ համագործակցության զարգացմանն ուղղված համատեղ առաջարկների, ծրագրերի և որոշումների իրագործման նպատակով:

Հոդված 7

Կողմերը պայմանավորվում են, որ սույն Համաձայնագրի գործողության ընթացքում փոխադարձորեն ձեռք բերված արդյունքներն օգտագործելու են իրենց հայեցողությամբ:

Հոդված 8

Կողմերը կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել սույն Համաձայնագրում, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ վեճեր առաջանալու դեպքում Կողմերը կձգտեն դրանք լուծել բանակցությունների միջոցով կամ վեճերի կարգավորման ցանկացած այլ ընդունելի եղանակով:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ ներպետական համապատասխան ընթացակարգերի կատարումը հաստատող Կողմերի վերջին ծանուցման ստացման պահից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ դիվանագիտական ճանապարհով մյուս Կողմին չծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի այն ծրագրերի և նախագծերի կատարման վրա, որոնք համաձայնեցվել են նրա գործողության ժամկետում, եթե Կողմերը այլ բանի մասին չեն պայմանավորվել:

Կատարված է Երևան քաղաքում 2000 թվականի հոկտեմբերի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ բելառուսերեն, հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում առավելությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի մարտի 26-ից: